



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



151.7  
4-43

14 JUL 2009

Վ 802

156.7  
4-43 ԱՐ  
ՀԱՅԵՐ»-ի ՄԵԴԱՎԵՐԺԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

III

Ա

Ա. Ա. ՊԵՏՐՈՎ

## ԵՐԵՒԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

10/10  
4/3 60

Բ

ՏԻԿ. ԽՍՀ.ՀԱ.ԿԱ.Խ.

## ՄԵԾԵՐՆ ՈՒ ՓՈՔՐԵՐԸ

2032.

Թարգմ. ոռակընից  
Ս. Տ. Ի. Ս. Ի. Ց. Ե. Ա. Ն. Ի.

1906

Էլեկտրոսահան «ՀԵՐՄԵՆ» ընկեր.,  
Մաղաքան փողոց (176).  
Թիֆլիս

1 OCT 2013

3970

## ԵՐԵԽԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կ. Ն. Վենցել

Ամեն մի՞ աշխարհ եկող երեխայ իրաւունք ունի  
կրթւելու, բայց նոյնողէս և իրաւունք ունի, որ իրեն  
չը կրթեն և մանաւանդ չափազանց չը կրթեն, որովհե-  
տեւ կրթութիւնը այն ձեռվ, ինչ ձեռվ որ այժմ յաճախ  
և առաւելապէս տեղի է ունենաւմ, մեծ մասամբ ոչ  
այլ ինչ է, եթէ ոչ բռնաբարում երեխայի անձնաւո-  
րութեան և բռնաբարում այն տպագայ մարդու, որը  
շամանակով կարող է երեխայից գուրս գալ, եթէ նրա  
զարգացումը կատարւի տղատ, առանց խոչընդուների:

Ներկայումս գործադրուող կրթութեան համեմատ երե-  
խան մի գործիք է, մի միջոց և ոչ թէ ինքըստինքեան  
նպատակ: Մենք ձգուում ենք նրան դարձնելու մեր ի-  
դէալի մարմնացում, մենք պատրաստում ենք նրանից  
յարմարաւոր անդամ այն հասարակական կազմի, որի  
մէջ մենք ենք ապրում և որի մէջ, մէր ենթագրութեամբ,  
նա էլ ապրելու է: Փոխարէն երեխայի մէջ կամք զար-  
գացնելու և այդ զարգացումը այն աստիճան հասցնե-  
լու, որ նա կարողանայ կամ ազատ կանգնել մեր իդ-

էալի կողմը և գառնալ մեր իդէալի ազատ ու գիտակից արտայայտիչ, կամ գուցէ նրա դէմ ելնել և նրա հակառակորդը լինել, մենք ուժազուրկ ենք դարձնում այդ կամքը, մենք կաշկանդում ենք նրան հաղար ու մէկ եղանակներով. երեխան դուրս է գալիս ոչ թէ ապագայի ինքնուրոյն և ինքնօրինակ ստեղծիչ, այլ ներկայի մի ամենատափակ և ամենասովորական պահպանիչ։ Անձնաւորութեան իրաւունքը ամենակոպիտ կերպով ունատակ է լինում մեր ամբողջ կրթական սիստեմով, նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ սիստեմը ամենագեղեցիկ նպատակներ է իր առաջ դնում։ Մենք բարձրաձայն խօսում ենք անձնաւորութեան իրաւունքների ժամկին, երբ նա զիմազուրկ եղած է լինում, երբ նա ընտելացած է լինում ստրկական հնազանդութեան, և անտես են անում հէնց այդ իրաւունքները, երբ անձնաւորութիւնը գեռ սաղմի մէջ է լինում, և թոյլ չենք տալիս նրան ազատ և կանոնաւոր զարգանալ այլ հրում են նրա զարգացումը այն ճանապարհով, որը համապատասխանում է մեր կամքին։ Բայց չէ որ կրթութեան իսկական իդէալը հէնց այն է, որ իրօք ապահովենք անձնաւորութեան ազատ զարգացումը, որ ազատենք նրան մեր ճնշումից, ինչ տեսակ էլ մեղմ և ընդոյշ ձեւեր ունենալիս լինի այդ ճնշումը, — որ մեր երեխայից կրթենք ոչ թէ մեղ գաշնակից, այլ հակառակորդ, ոչ թէ մեր իդէալի պահպանիչ, այլ նրա խորտակիչ, ապագայի ստեղծիչ, որը կոփ կը հրատարակի ներկային, որի պահպանաները եղել ենք մենք։ Ոչ թէ նրան պէտք է նկատենք որպէս մեր ապագայ

դաշնակից, այլ ընդհակառակը, եթէ մենք ինքներս շարունակ հոգեպէս առաջադիմում ենք և կանգ չենք առել մէկ կէտի վրա, — մենք պիտի մեզնից պատրաստենք նրա համար աջակիցներ և օգնականներ։

Ժամանակ է հասկանալ որ երեխան մի իր չէ, ոչ էլ մի խաղալիք, իր ծնողների և զաստիարակների սեփականութիւն — պէտք է մեծարենք նրա մէջ թագնւած ազատ մարդկային անձնաւորութիւնը և ամեն հնարին ըստ նպաստենք այդ անձնաւորութեան ամենափարթամ զարգացման։ Խօսում են մարդու և քաղաքացու ազատութեան մասին, խօսում են կնոջ ազատութեան մասին, խօսում են ճնշեած ազգութիւնների աղատութեան մասին, — ժամանակ է սկսել խօսել և երեխայի ազատութեան մասին։ Երեխան էլ պէտք ունի Ազատութեանց Մեծ Հրովարտակի, որ իր մէջ պարունակի բոլոր անհրաժեշտ զբաւականները աղատութեան անշեղ իրականացման՝ նրա կրթութեան և զաստիարակութեան գործում։ Կրթելու գիտութեան ամենամեծ նպատակներից մէկը հէնց այն է, որ ձգտենք հասկանալու ճշնշման այն բոլոր ձեւերը (ինչպէս էլ որ սրանք ծածկւած և քօղարկւած լինեն), որոնք բռնանում են սովորաբար երեխայի կամքի վրա, և միաժամանակ որոշներ և այն եղանակները, որոնցով կարելի կը լինի զբանցից խոյս տալ։ Եթէ մենք իսկապէս ազատենք երեխայի զարգացումը բոլոր այն շղթաներից և կապանքներից, որով սովորաբար կաշկանդում ենք այդ զարգացումը, — մենք շատ բան արած կը լինենք։ Բայց ի հարկէ միայն այս բաւական չէ. երեխայի ազատազրած կամքին պիտի մատակարա

բենք և այն նիւթը, որով նա կարողանար իր ստեղծաշորժական ոյժը ցոյց տալ և ծաղկեցնել: Ամեն ձնշումից ազատած երեխային պիտի տանք բոլոր միջոցները, պիտի նրա տրամադրութեան տակ դնենք քարգաքակը թութեան ձեռք բերած բոլոր գանձերը, որպէս զի նա կարողանայ մեծագոյն զարգացման հասցնել իր բնատուր ուժերը և ձեռք բերել գիտութիւնների ամենաընդարձակ պաշարը, այնքան, որքան որ իրօք կարող է իւրացնել նրա միտքը: Ազատ երեխան, որ իր ուժերն և ընդունակութիւնները ծաւալում է՝ ոչ մի բանով չը կաշկանդւած գործակցութիւն ունենալով բնութեան հետ և լայն, բեզմնաւոր շփում մարդկանց հետ,— ահա առաջին և վերջին խօսքը «նոր կրթութեան», որը միայն կարող է հակակշիռ լինել վերջերքս նըշկաւող՝ մարդկութեան այլասեռման և մանրացման: Ժամանակակից գոլրոցը, գործարան-դպրոցը, բանտ-դըպրոցը, որի վրա է ընկում գլխաւորապէս հոգեկան այլասեռման մեղքը, տեղ պիտի տայ ազատ դպրոցին: Ազատ կրթութիւնը պիտի վերջնականապէս դուրս մըզ կի կրթութեան այն սիստեմը, որի մէջ մարդը միայն գործարանային արդիւնագործութեան մի իր է:

Ի՞նչ կերպով կարելի կը լինէր ապահովել երեխայի վկատար ազատութիւնը կրթութեան և դաստիարակութեան գործում: Ամենաառաջին և ամենաէական պայմանը այսեղ այն է, որ շարունակ դիտենք և ուսումնասիրենք երեխայի բնութիւնը և հնարաւորութիւն տանք գոհացնելու զարգացման ընթացքում նրա մէջ բնականօրէն առաջացող բոլոր պահանջներին:

Կրթութեան այն սիստեմը, որի նպատակն է ազատել երեխային ձնշման և բնութեան բոլոր ձևերից, պիտի իբրև հիմք ընդունի ոչ թէ երեխայի բնութեան ուսումնասիրութիւնը առհասարակ, այլ նոյնպէս, և մինչև անգամ առաւելապէս, այն մասնաւոր անհատական երեխայի բնութեան ուսումնասիրութիւնը, որի կրթութիւնը աչքի առաջ ունի:

Երեխայի զարգացման ազատութիւնը ապահովելու համար անհրաժեշտ է նրա անհատական բնութեան բոլոր երեխի շարունակ մանրազնին դիտել և ուսումնասիրել բայց այս գիտողութիւնն և ուսումնասիրութիւնը միայն այն ժամանակ կը հասնեն իրենց նպատակին, եթե զիտում ենք և ուսումնասիրում ենք ազատ երեխային, նրա կենսական եռանդի ոչ մի բանով չը կաշկանդւած արտայայտութիւնները:

Երեխայի հոգեկան կեանքը աւելի լաւ հասկանալու համար պէտք է նրան ազատութիւն տանք պարապելու այս կամ այն գործով և միենոյն ժամանակ տանք հըննապաւութիւն ընտրութիւն անելու աւելի կամ պակաս բազմազան պարապմունքների մէջ, և զիտենք թէ որ կողմն է ձգտում նրա կամքը: Մա է ամենալաւ միջոցներից մէկը նրա բնութիւնը և նրա բնական պահանջներն ու ձգտումները ուսումնասիրելու: Միայն զիտելով ինքնուրոյն գործունէութիւնը բոլորովին ազատ արտայայտող երեխային՝ մենք կը կարողանանք իրօք հասկանալ նրա պահանջները: Քանի աւելի մեծ է երեխայի ազատութիւնը և քանի աւելի բազմազան են այն ճանապարհները, որոնցով կարող է ընթանալ նրա գործու-

նէութիւնը, այնքան աւելի հեշտ է ճանաչել նրա բնուշթեան իսկական, նորին, ճիմնական պահանջները և այնքան աւելի հեշտ է կազմակերպել մի յայտնի երեխայի համար կրթութեան և դաստիարակութեան հէնց այն սիստեմը, որ պահանջում է նրա բնութիւնը: Եւ բացի դրանից, ազատ թողնելով երեխային նրա կրթութեան և դաստիարակութեան ամբողջ ընթացքում և զիտելով կարելիին չափ լիակատար և բազմակողմանի կերպով այդ ամբողջ ժամանակ երեխայի ազատ գործունէութեան արտայալութիւնները, մենք կարող կը լինենք սրբազն զաստիարակութեան և կրթութեան մեր ընդունած սիստեմը, այսինքն՝ ուղղել այդ սիստեմը համաձայն մեր նոր ձեռքբերած, աւելի կատարեալ ծանօթութեանը երեխայի բնութեան և նրա պէտքերի հետ:

Միայն ազատ զաստիարակութիւնն և ուսումը հսարաւորութիւն կը տան զաստիարակին գտնել կրթութեան այն լաւագոյն սիստեմը, որ համապատասխան կը լինի աչքի առաջ ունեցած, յայտնի երեխայի բնութեանը: Օրինական է միայն զաստիարակութեան և ուսումն այն սիստեմը, որը առաջ է եկել երեխայի ազատ գործունէութեան արտայայտութիւնները բազմակողմանի, լայնածաւալ, ճիմնաւոր կերպով դիտելուց և որը շարունակ կատարելագործուում է նոյնական բնութափառ դիտելով ազատ երեխային: Միայն կրթութեան այս սիստեմը բաւականաչափ ճկուն և դիւրաթեք կը լինի և կը կարողանայ միշտ յարմարել կեանքի պահանջներին ու նպաստել այս ինչ անհատական երեխայի զարգացման և նրա բոլոր հարուստ բնատուր ֆիզիկական և հո-

կեկան ուժերի փթթման, և ոչ թէ կայլանդակի և կադաւաղի նրա մէջ թագնւած պայծառ մարդկային պատկերը:

Ոչ թէ երեխանները գոյութիւն ունեն դաստիարակութեան և ուսումն սիստեմների համար, այլ այս սիստեմները գոյութիւն ունեն երեխանների համար և պէտք է համապատասխանն նրանց բնութեանը, նրանց անհատական պէտքերին, պահանջներին ու ձգտումներին: Դաստիարակութեան և ուսումն սիստեմը լոկ մի եղբարփակութիւն է երեխայի ազատ գործունէութեան վրա մեր արած դիտողութիւններից և միայն ցոյց է տալիս այն ճանապարհը, որով պիտի ընթանայ դաստիարակը, աշխատելով աշակցել երեխայի զարգանալուն՝ անհատական բնութեան համաձայն և միենոյն ժամանակ առանց կաշկանդելու նրա ազատ գործունէութեան արտայայտութիւնները:

Մինչև այսօր երեխան զոհ էր բերւում զաստիարակութեան և ուսումն զանազան սիստեմների: Ժամանակ է հասկանալ սիստեմների գործածութեան նշանակութիւնն ու սահմանները, ժամանակ է դադարել սիստեմները մի ինչ որ ահազին գերեզմանատուն դարձնելուց, որտեղ թաղւումն կեանքի բոլոր ամենամատաղ, ամենափարթամ ծիլերը: Կեանքը անսահման լայն է ամեն սիստեմներից, և ամեն մի սիստեմ միայն չափազանց պատիկ անկիւն է լայնատարած բազմազան կեանքի, նա իր յայտնի գերը խաղում է այս կեանքի մէջ, բայց ըստ պիտի իր սահմաններից անցնի: Ոչ թէ կեանքը պիտի մեռնի սիստեմների գերեզմանատաններում, այլ

նիստեմները միշտ ծնւռում և մեռնում են կեանքի ոլորտի  
տի մէջ: Ամեն մի սիստեմ իր արդարացումը ստանում  
է կեանքից և կատարելով իր գերը, պիտի տեղ տայ  
մէկ ուրիշին, որ աւելի լիակատար և աւելի լաւ կեր-  
պով է յարմարեցրած աւելի լայն, բազմազան և եռուն  
կեանքի պահանջներին: Ամեն մի սիստեմ պիտի միայն  
ձևակերպի այն ուղղութիւնը, որով պիտի առաջ շարժ-  
ւի կեանքը ամենամեծ արագութեամբ և եռանդով:  
Ի կեանքի պէտք է ուշի ուշով հետեւ թէ արդեօք չի փո-  
քայց պէտք է ուշի ուշով հետեւ թէ արդեօք չի փո-  
քանայ մի թումբ, որ կտրում է արագընթաց  
կը դառնայ այդ թումբ, որ կտրում է արագընթաց  
կեանքի բուռն հոսանքի առաջ: Ի հարկէ, կեանքը վերջ  
կեանքի խորտակի այդ թումբը, բայց որքան ա-  
նելորդ գոհեր կընկնին այդ ժամանակ, որքան թանկա-  
գին և լաւագոյն ծաղիկ կեանքեր կը խորտակւեն ա-  
պարդիւն կերպով... Սյոպէս և կը թութեան սիստեմ-  
ները պէտք է յարմարւեն երեխայի ազատ զարգացող  
բնութեանը, պէտք է շարունակ փոփոխւեն, պէտք է  
իրենց կոչման ծառայելուց յետոյ, ազատ տեղ տան  
ուրիշներին, որ հիմնած են ամեն անհատական երեխայի  
կեանքի աւելի լիակատար և խորին ծանօթութեան  
վրա: Կեանքը երբէք չի դադարում, իսկ բոլոր սիս-  
տեմները վերջ ի վերջոյ իրենց դարը ապրում են և  
գառնում են դիակ, և այդ դիակները պէտք է աւելի  
հեռու տանեւ կեանքի լայն ճանապարհից, որպէս զի  
նրանք չը վարակեն նրա մաքուր օգը և չը խանգարեն  
նոր, աւելի լայն և վեհ նպատակների առաջընթացու-  
թեան:

Այսպէս ուրեմն, դաստիարակութեան և ուսման  
գործում ամենալարեոր, ամենահիմնական գաղափարը,  
որ կրթութեան գիտութիւնը պիտի մշակի և լուսաբա-  
նի կարելիին չափ ամեն կողմից,—է երեխայի ազա-  
տութեան գաղափարը, նրա գործունէութեան ազատ,  
անարգել արտայայտութեան գաղափարը:

Երեխան էլ ընտանիքի մէջ պիտի ունենայ այն  
աքստութիւնը, որով օգաւում են ընտանիքի չափահաս  
անդամները։ Ամեն մի ընտանիք ունի իր սահմանա-  
գրութիւնը, իր modus vivendi—ապրելու եղանակը, ո-  
րին պիտի ենթարկեի նրա ամեն անդամը, եթէ միայն  
կամենում է որ իր ընտանիքը մի ներդաշնակ ամբող-  
ջութիւն կազմի և որ ընտանիքի անդամներից իւրա-  
քանչիւրը վայելի ազատութեան, կեանքի և երջանկու-  
թեան ամենամեծ չափը։ Այդ սահմանափակման պէտք  
է ենթարկեի և երեխան, քանի որ մնում է ընտանիքի  
անդամ։

Կանոնաւոր կազմւած ընտանեկան սահմանադրութեան մէջ իւրաքանչիւրի, ասել է՝ նաև երեխայի ազատութիւնը սահմանափակում է միայն մնացած իւրաքանչիւր անդամի հաւասար ազատութեամբ։ Այս սահմաններից գուրս թէ երեխայի և թէ չափահաս անդամի ազատութեան սահմանափակումը ապօրինի է։ Եթէ երեխան զրկում է իր ազատութեան որևէ մասնիկից, նա պիտի միշտ տեսնի և հասկանայ որ նա դրանից զրկում է միայն շնորհիւ ընտանիքի հետ կենացութեան, որ հէնց այդպիսի զրկողութեան է ենթարկում և ընտանիքի չափահաս անդամը և որ այդ զրկողութ

թիւնների մէջ ոչ մի քմահաճ բան չը կայ: Երեխայի համար չը պիտի գոյութիւն ունենայ որևէ է բացառիկ օրէնսդիրք, որ մի յատուկ սահմանափակում է պարունակում նրա ազատութեան կամ ընդհակառակը, տալիս է նրան մի որևէ է բացառիկ իրաւունք, որպիսին չունեն նոյն իսկ հասակաւորները: Ահա հիմնական սկզբ բունքը, մի սկզբունք, որի իրական գործադրութիւնը բարդ է պայմանների մէջ սակայն կալուտանեկան կեանքի պայմանների մէջ սակայն կալուտանեկան կեանքի պայմանների: Իրող է ի հարկէ պատահել ահազին դժւարութիւնների:

Այս սկզբունքը պէտք է նշանակութիւն ունենայ և դպրոցական կեանքում: Աշակերտն ու սանը պիտի գայելն հաւասար իրաւունքներ ուսուցչի և գասափառ բակի հետ. Նրա ազատութիւնը չը պիտի աւելի փոքր, այլ հաւասար լինի վերջինիս ազատութեան: Չը պիտի արին պիտի կուրօքն հապատակի նեղինակութիւն, որին պիտի կուրօքն հապատակի սանը: Նրանք երկուան մեծ ամբողջութեան հաւասար իրաւատէր անդամէլ մեծ ամբողջութիւնը մենք կոչում ենք ներ են, և այդ ամբողջութիւնը մենք կոչում ենք մարդկանց փիխադարձ կրրող եւ ուսուցանող կենակցութիւն: Նրանք հաւասարապէս պէտք է ենթարկեն այն օրէնքներին, որոնք բղիում են այդ կրթիչ կենակցութիւնը ամբողջութիւնը պայմաններից: Պարզ և հասկանալի դարձնել այդ թեան պայմանները սանի և գաստիարակի համար և դրանով պայմանները սանի և գաստիարակի համար համար ամեն մէկի ազատ հապատակութեանը այդ պայմաններին—ահա սրան է որ պիտի ձգտենք:

Եթէ կամենում ենք ազատ մարդիկ կրթել, պէտք է ձգտենք ոչնչացնելու և վերացնելու ամեն մի անձնական նեղինակութիւն մարդկային փիխադարձ կե-

նակցութեան ձևերից, լինի այդ ձևը կրթող կենակցութիւն, որի մէջ գտնուում է երեխան դպրոցում, թէ կենակցութեան այն ձևը, որը ընտանեկան կեանք է կոչում: Մի խօսքով, միակ օրինական նեղինակութիւնը—այն անգիր օրէնքի նեղինակութիւնն է, որը բղիում է մարդկանց փիխադարձ կանոնաւոր կենակցութեան պայմաններից: Դա է բարձրագոյն նեղինակութիւնը, որը հաւասարապէս վերաբերում է բոլոր մարդկանց և որը իր մէջ չի կարող պարունակել բռնութեան և կամայականութեան որևէ նշայը:

Մարդկային ամեն մի կենակցութիւն, լինի դա ընտանիք թէ այն, ինչոր մենք անւանեցինք փիխադարձ կրթող կենակցութիւն, պէտք է աշխատի բոլոր իր անդամների միահամուռ ջանքերով հասկանալ այդ կենակցութեան կանոնաւոր ձևերը որոշող իրական պայմանները, այն ձևերը, որոնք նրա ամեն մի մասնակցին ապահովում են ամենամեծ ազատութիւն իր անկախ գործունէութիւնը արտայայտելու: Մարդկային ամեն կենակցութիւն պիտի ջանայ իր գոյութեան գաղտնիքը գտնելու, այն աներենոյթ օրէնքը, որ նրա համար հիմնական է. այդ ճանապարհով նա կազատի բոլոր կեղծ և պատիր ձեւերից, որ կարող է ստացած լինել այդ աներենոյթ օրէնքը մարդկանց փիխակցութեան մէջ: Ունէ բնական հողի վրա բուսած ամեն մի կենակցութիւն միշտ պիտի ձգտի փիխակցական կենակցութիւն գաղափարական այսինքն՝ ձգտի իր սեփական օրէնքը բանալու և շարունակելու այնուհետև զարգանալ և կատարելագործել այդ օրէնքի պարզ գիտակցութեամբ:

Այդ բնական օրէնքը հէնց այն ճշմարիտ հեղինակութիւնն է, որ կենդանաբար ողին է կազմում մարդկային կենակցութեան յայտնի ձևի: Այդ օրէնքի չը հասկանալը մարմնացնել է տալիս այդ օրէնքը անձնաւորութիւնների մէջ, իսկ այս բանը առաջացնում է նրա կամայական մեկնութիւններն և կանոնաւոր ճանապարհից շեղելը: Ամեն մի մարդկային օրգանական և անգիտակից կենակցութիւն ձգտում է գիտակցական դառնալու և այն էլ՝ գիտակցական դառնալու բոլոր մասնակից անդամների համար: Այս է ազատազրութեան ուղին, որովհետև միմիայն այս ուղիով են վերանում բռնութեան, կամայականութեան, հեղինակութեան այն բոլոր ձևերը, որոնք թագնւած են կենակցութեան օրգանական, անգիտակից, աւանդական ձևերի մէջ:

Որպէս զի աւելի պարզ ընդգծած լինեմ իմ պաշտպանած տեսակէտը, ուզում եմ այլևս համեմատել նրան Զօն Ստիւարտ Միլլի կարծիքների հետ միկնոյն հարցի մասին:

Իր «Ազատութեան մասին» շարադրութեան մէջ, որտեղ Միլլը այնպէս պաշտպան է հանդիսանում այն մտքի թէ «ամեն մի անհատ պէտք է բոլորովին միահեծան լինի» «այն բանի մէջ, ինչոր անձամբ իրեն է վերաբերում», ազատութիւնը տարածում է միմիայն այն կարգի մարդկանց վրա, որոնք «չափահաս են և իրենց ուսակութիւնների լիակատար տէր», այսինքն՝ միայն հասակաւոր անձանց վրա: Բայց ազատութիւնը չէ տարածում երեխաների բազմաթիւ դասակարգի և առհասարակ ամբողջ մատաղ սերնդի վրա: Ինչ որ վե-

րաբերում է վերջիններիս, Միլլը ասում է որ «հասարակութիւն բացարձակ իշխանութիւն ունի անհատի վրա մանկութեան և պատանեկութեան ամբողջ ժամանակամիջոցում», և որ «ներկայ սերունդը լիակատար ինքընի լիակատար տէր է ազագայ սերնդի կրթութեան և առհասարակ ամբողջ բախտի կազմակերպութեան գործում»:

Այն ժամանակ, երբ գրում էր Միլլը, գեռ չէր արձարծում և չէր դրւում երեխաների և առհասարակ երիտասարդ սերնդի ազատութեան հարցը: Բայց մենք ըստ երևոյթին ապրում ենք մի այնպիսի դարում, երբ արդէն ժամանակ է պարզ և որոշ գնել այդ հարցը: Իրաւի՞ արդեօք հասարակութիւնը մի այդպիսի բացարձակ լիշխանութիւնը ունի անհատի վրա նրա մանկութեան և պատանեկութեան ամբողջ ժամանակամիջոցում: Իրաւի՞ արդեօք սերկայ սերունդը լիակատար և ինքնիշխան տէր է ազագայ սերնդի կրթութեան և կեանքի կազմութեան գործում: Օրինական է արդեօք այդ լիշխանութիւնը: Իրաւացի՞ է արդեօք նա: Զե՞ն կարող արդեօք երեխաները ձայն բարձրացնել իրենց՝ այս կամ այն ողով կրթելու ամեն տեսակ յաւակնութեանց դէմ, այս կամ այն ուղղութեամբ իրենց կեանքը տնօսինելու ամեն տեսակ բռնի փորձերի դէմ:

Այն, հասել է ժամանակը, երբ պիտի խախտի սերկայ սերնդի բացարձակ լիշխանութիւնը ապագայ սերնդի վրա, հասել է ժամանակը երեխային ազատագրելու հասակաւորների նոյնիսկ բարեմիտ ինսամակալութիւնից: Ներկայ սերունդը պիտի գիտակցի իր պարտականութիւնները ապագայ սերնդի վերաբեր-

մամբ, որոնք կայանում են ոչ թէ նրա մէջ, որ այդ ապագայ սերնդի միտքն ու հոգին ձևակերպի համաձայն իր իդէալների և օգտվի այդ նպատակով այն իշխանութիւնից, որ իրօք ունի իր ձեռքում, այլ նրա մէջ, որ հրաժարվի այդ իշխանութիւնից, երեխայի զարգացման և կեանքի լիակատար ազատութիւնը ապահովելու համար, նրան ազատ և անկախ ինքն իրեն ձևակերպելու հարաբերութիւն տալու համար:

Մեր հասարակութեան մէջ, բացի ամեն տեսակ ստրկութիւնից, քաղաքական, անտեսական, կանանց և այլ ստրկութիւնից, գոյութիւն ունի այլ ևս մի տեսակ ստրկութիւն — երեխաների ստրկութիւն, մատադ սերնդի ստրկութիւն։ Մեր երեխաները, մնր մատադ սերունդը — ստրուկներ են, որոնց ձեռներին ու ոտներին զնդնդում են մեր նախապաշարմունքների, մեր հայեցքների կապանքերը, հայեցքների, որոնց համաձայն փորձում ենք անօրինել նրանց կեանքը, զարգացումն ու կրթութիւնը։ Բայց այդ ստրուկները պէտք է ազատագրեն, և շատ և շատ դէպքերում նրանք իրենք են ճնշում ձեռք բերելու այդ ազատութիւնը։ Բայց որպէսզի երեխաների սպատագրութեան գործը աւելի շուտով յաղթական հանդիսանայ, աւելի շուտով կանգնի հաստատ և ամուր հողի վրա, պէտք է որ հասակաւորները պարզ գիտակցեն թէ ինչ ահազին նշանակութիւն ունի ազատութիւնը մատադ սերնդի համար, և որ նրանք յօժարակամ հրաժարւեն այն բացարձակ իշխանութիւնից, որ գտնում է նրանց ձեռքում այդ սերնդի նկատմամբ, որ նրանք ապահովեն նրան ինք-

նակրթութեան, ինքնազարգացման, ինքնուրոյն կեանքի լիակատար ազատութիւնը։ Երեխայի ազատութիւնը մի այնպիսի մեծ բարիք է նրա համար, որից նրան զրկելու ոչ մի իրաւունք չունենք առանց բաւականին ծանրակշիռ, անհերքելի և անվիճելի ապացոյցների, որոնք վկայէին յօգուտ՝ նրան այդ բարիքից լիովին կամ մասամբ զրկելու անհրաժեշտութեան։

Բայց արդիօք շուտով է գալու այդ ազատ երեխայի ժամանակը, երբ ամեն մի երեխայի առաջ մարզս կը զգայ մի «սրբազն սարսուռ», որ թոյլ չի տայ կոպիտ և բռնի կերպով ներս խուժել նրա աշխարհը, — երբ ամեն մի երեխան մարդուս աչքին կերեայ որպէս «ապագայի մեծագործ ստեղծիչ», երբ ամեն մի երեխայի մէջ կըյարգւի ազատ մարդկային անձնաւորութիւնը։ Այս հարցին գժւար է պատասխան տալ լիակատար վստահութեամբ։ Բայց մի բան, որ կարելի է ասել և ասել լիակատար վստահութեամբ, այդ այն է, որ մինչև որ հաստատ և ամուր սկզբունքների վրա կառուցւած չի լինի ազատ երեխայի բազաւորութիւնը, մինչև այդ ժամանակ չի ստանայ հաստատ և ամուր հիմք անսասան ձև նաև բոլորնին ազատ մարդու բազաւորութիւնը։ Ազատազրած երեխան ամեն ազատութիւնների սկիզբն ու վախճանն է, միակ և ճշմարիտ գրաւականն է նրանց լիակատար և հանրական իրականացման։ Ընտանիքը, գալրոցը, հասարակութիւնը, պետութիւնը իրենց վեհ և սրբազն նպատակ պիտի տութիւնը իրենց վեհ և սրբազն նպատակ պիտի տութիւնը։ Այս բոլոր գործարձնեն երեխայի ազատագրութիւնը։ Այս բոլոր գործարձնեն երեխայի միացած ջանքերով ազատ դաստիարակու-

թեան և ուսման գործը պիտի լայն թողնի իր խորին, ամեն կողմ ճիշդաւորող արմատները: Մենք անսասան և հաստատ համոզւած ենք որ նոր ազատ մարդկութիւնը իր առաջնակարգ նպատակներից մէկը կը դնի — իրականացնել դաստիարակութեան և ուսման ազատութիւնը բոլոր աստիճաններին և բոլոր հասակների համար և ապահովել երեխայի և առհասարակ մատադ սերնդի լիակատար ազատութիւնը ապրելու և զարգանալու գործում, մի ազատութիւն, որ վայելում են բոլոր իրաւատէր հասակաւոր քաղաքացիները: Միայն երեխայի և առհասարակ մատադ սերնդի ազատագրութիւնը կարող է անխորտակելի գրաւական լինել, որ Ազատած Մարդկութիւնը կը համնի ազատութեան, երչանկութեան և կատարելութեան բարձրագոյն և մեծագոյն աստիճանին՝ անձնական և հասարակական կեանքի բոլոր շրջաններում:

Որպէս ամեն ազգի, այնպէս և ամբողջ մարդկութեան գիտակցութեան մէջ աւելի և աւելի է մտնում այն համոզունքը, որ թէ մարդիկ և թէ հասարակական յարաբերութիւնները միայն այն ժամանակ կը սկսն արագ քայլերով անընդհատ կատարելագործեն, երբ ազատ կը լինի և բանական, խելացի սկզբունքների վրա կառուցւած կը լինի մատադ սերնդի կրթութեան գործը, երբ կունենանք ազատ դպրոց, հասկանալով այս խօսքը տմենալայն իմաստով: Ազատ դպրոցը, ազատ կրթութիւնը conditio sine qua non (անհրաժեշտ հիմնական պայման) է ազատ հասարակութեան և ազատ մարդու: Այն չափով, որ չափով որ մենք՝ հա-

սակաւորներս, մեզ արգէն ազատ են զգում, մենք պէտք է մեր ուժերը չը ինսայենք ազատագրելու երեխային, ազատագրելու մատադ սերունդը այն դարեւոր մնշում մից, որի մէջ նրանք գտնուում են: Սա է ամբողջ մարդկութեան ազատագրութեան բանալին ձնշման և բռնակալութեան բոլոր ձեերից. այդ բանալին բաց կանի բոլոր ուրիշ կողմէքներն ու բոլոր ուրիշ գոները, որնցով զեռ ևս պէտք է անցնենք:

Ազատագրել շուրջը ազատութիւն ցանել, ասպարէզ բանալ մարդու ազատ շինարար ստեղծագործութեան համար ամեն տեղ և ամեն հանգամանքներում, որտեղ այդ աղօտ ստեղծագործունէութիւնը արգելք չի հանդիսանում ուրիշների ազատ արդիւնագործութեանը — ահա այն վսեմ նշանաբանը, որը պիտի մեր ուղեցոյց աստղը լինի: Թոթափենք բոլոր աւելորդ շղթաները, կապանքները, պատնէջները, թուլմբերը, վերացնենք բոլոր աւելորդ սահմանափակումները, ական փորենք ստրկութեան ամեն ձեերի և տեսակների տակ, ինչ պատւաւոր անուններով որ սրանք կոչւելիս լինեն և ինչ քօղով որ սրանք ծածկւելիս լինեն: Ազատ լինենք ինքներս և օգտւենք այդ ազատութիւնից ազատ ստեղծագործական կեանքի համար և նրա համար, որ ուրիշներին էլ ազատագրենք ստեղծագործական աշխատանքի համար: Իսկ այդ ստեղծագործական աշխատանքի բարձրագոյն նպատակն է — ստեղծել ամբողջ երկրագնդի բոլոր մարդկանց և բոլոր ազգերի ազատ եղբայրակցութիւնը և բարձրացնել մարդկային պատկերը զարգացման և կատարելութեան այն աստիճանին, որին միայն կարող է նա բարձրանալ:

# ՄԵԾԵՐՆ ՈՒ ՓՈՔՔԵՐԸ

Տիկ. Իսահակսենի

Հասակակիցների ուղանում

«Թռչնակների դայլայլիկն և արկի» շողն է ձեր  
սրտերում, ձեր մտքերի մէջ կարկաջում են վտակներ»  
(Լօնգֆելլօ): Այս խօսքերով է բանաստեղծը բնորոշում  
«անմեղ» երեխայի հոգին: Հէնց այդպէս էլ է գուցէ:  
Բայց սակաւ է երեխայի հոգին համարձակւում իրեն  
բոլորովին ցոյց տալ, սակաւ է բացւում, այն էլ զլիսա-  
ւորապէս իր նմանների մէջ: Հասակաւորներս, մանա-  
ւանդ ծնողներս ու դաստիարակներս, երեխայի աչքում  
միշտ մի տեսակ բարձրագոյն դատաւորներ ենք, օրի-  
նաց տախտակները ձեռքին: Ամեն անգամ, երբ յան-  
կարծ, անսպասելի կերպով յայտնի է դառնում երեխայի  
հոգու որկ է նոր, մինչև այդ ժամանակ ծածուկ եղած  
կողմը, մանկական հայեացքը ուղղւում է մեզ, կարծես  
հարցնելով. «Այդպէս է թէ այդպէս չէ», «լաւ է թէ  
վատ»: Երեխայի հետ զգուշութեամբ վարւելով, կարե-  
լի է դեռ յոյս ունենալ որ նա բաց կանի ձեր առջևի իր

հոգու շատ և շատ կողմերը, բայց այնուամենայնիւ ամենից աւելի լիակատար և ազատ կերպով նրա ներքին աշխարհը երևան է դալիս հասակաւկիցներ-ընկերների շրջանում։ Ահա թէ ի՞նչու երեխայի ընկերակցութիւնը ուրիշ երեխաների հետ ևս համարում եմ մի այնպիսի բարերար գրդիչ նրա հոգեկան զարգացման համար, որպիսին չի կարող լինել ոչ մի կրթութիւն, ոչ մի դեկավարութիւն հասակաւորների կողմից։

Անկասկած, ընկերութիւնը ունի և իր վտանգները, նոյնիսկ մեծ վտանգները, — մեր խօսքը վատ ազգեցութեան մասին է, — բայց այս վատ ազգեցութեան դէմ պէտք է միջոցներ ձեռք առնել, ոչ թէ զրկել երեխային ընկերութեան բարիքներից։ Երեխան մի այնպիսի մեծ պահանջ է զգում գոնէ երբեմն թոթափելու ամեն տեսակ ճնշում, ամեն տեսակ կապանք, ազատ ապրելու, որ յաճախ՝ չունենալով հասակակից ընկերներ, բարեկամութիւն է անում ծառաների հետ։ Ծառաները իրենց մտաւոր զարգացմամբ աւելի մօտիկ են նրան։ Նրանց ընկերութիւնը նրա հոգու վրա չէ գնում այն կապանքները, որ իրենց սրբազն պարտքն են համարում դնել հոգատար ծնողները։ Նոյնիսկ ծնողներին չափաղանց սիրող երեխան այնուամենայնիւ զգում է, որ նրանք ամեն բան կշռադատում են և ամեն իր խօսքըն ու վարմունքը ըննում։

Երեխայի ներքին «ես»-ի ազատ արտայայտութիւնը ընկերների շրջանում տալիս է ծնողներին և դաստիարակներին այնպիսի ցուցմունքներ նրա կը բ-

թութեան համար, որ անկարելի է ձեռք բերել ոչ մի անձնական ջանքով, հարց ու փորձով և մասկավարժական միջոցով։ Իմ աչքին, օրինակի համար, երեխաների ձայների ելեկջները խաղի ժամանակ հարեան սենեակում յաճախ բաց են արել նրանց բնաւորութեան այնպիսի գծեր, որոնք մինչև այդ ժամանակ ինձ բոլորովին անծանօթ են եղել։

Բայց այդ ընկերակցութեան ամենազլիսաւոր նըշանակութիւնը, իմ կարծիքով, նրա մէջն է, որ երեխաները փոխազարձ հաւասարապէս ազգում են իրար վրա, հաւասարը ազգում է հաւասարի վրա, և դա կազմում է հակագրութիւն անհաւասարների, չափահանների ճնշչէ ազգեցութեանը։

Բնաւորութեան կազմակերպութեան համար ահազին նշանակութիւն ունի զործողութիւնների ազատութիւնը, իսկ իր ընկերակիցների հետ յարաբերութիւնների մէջ երեխան գրեթէ միշտ վայելում է այդ ազատութիւնը։ Նա կարող է համաձայնել և ընդունել կամ մերժել նրանց առաջարկը, կարող է զատել իրեն կամ բարկանալ, ինչպէս կուզնայ, և նրա զարգացման այս օգակը չենք կարող փոխարինել ոչ մեր խրատներով, ոչ էլ մեր սաստումներով։

Ծնկերութիւնը կարող է սովորեցնել երեխային յօժարակամ հրաժարւելու իր ցանկութիւններից, յօժարակամ զսպելու իր հսականութիւնը, իսկ այս յաղթութիւնների շնորհիւ կը կարողանան զարգանալ նրա բնաւորութեան մէջ շատ և շատ ազնիւ գծեր։ Մենակ այս բաւական է, որ խօսենք յօդուտ հասակակիցների ըն-

կերութեան և չը համաձայնւենք հակառակ խօսողների հետ, որոնք մեծ ուշադրութիւն են դարձնում զանազան գժութիւնների- վրա, որ երեխան կարող է իւրացնել իր ընկերներից: Անփորձ ուսուցիչները ահազին նշանակութիւն են տալիս այդ գժութիւններին, բայց չեն տեսնում որ այդ ամենը միայն ինքնուրոյն, ապատ լինելու բնական պահանջի արտայայտութիւն է, մի պահանջի, որ այդպիսի անփորձ դաստիարակները սաստիկ ճնշում են երեխայի մէջ: Երեխն երեխանները իրար վերաբերմամբ, մեծերի կարծիքով, գրեթէ անսիրտ անտակութիւն են ցոյց տալիս, բայց դա նրանց մէջ այնպէս բնական, անմիջական կերպով է արտայայտում, որ միայն օգուտ է բերում, բանի որ այդպիսով նրանք իրար յդկում են: Երեխանները իսկ և իսկ կըթում են միմեանց՝ պարզամտութեամբ այնպիսի խրատական նկատողութիւններ անելով իրար, որոնք եթէ հասակաւորների բերանից լսւէին, վիրաւորանքի կամ պատճի տեղ կընդունէին և գուցէ միայն չարութիւն առաջացնէին երեխայի մէջ, որովհետև նա միայն պիտի հտմբերէր, լուէր, մինչդեռ ընկերոջը նա կարող է պատասխանել, կարող է պաշտպանւել: Այս նոյն անմիջական վերաբերմունքը դէպի ընկերները կարող է երեխայի մէջ արծարծել ամենաքնքոյց, աղնիւ, զուտ մանկական զգացմունքներ, որ նա ամօթխածութեամբ զապում է իր մէջ մեծերի ներկայութեամբ, քանի որ սրանց կողմից էլ չէ նկատում միատեսակ անմիջական վերաբերմունք դէպի ինքն ու դէպի ուրիշները.

Երեխան շատ շուտ նկատում է, որ մենք արդէն

փորձել ապրել ենք այն, ինչ որ գեռ իրեն հետաքրքրում և յուզում է, և ինչքան էլ որ մենք, հասակաւորներս, ուշադրութեամբ վերաբերուէինք նրա հարցասախրութեանը, նա միշտ մի պահանջ կըզգայ իրեն հետաքրքրութիւնը, որի միշտ մի պահանջ կըզգայ իրեն հետաքրքրութիւնը, որին նրանք նոյնչափ նոր և կարևոր երեային, որպէս և իրեն:

Ճարունակ մեծերի մէջ մնալով, երեխան շուտով ձեռք է բերում այն նեղ և վազաժամ չափահասութիւնը, որի արտայայտութիւնն է ի միջի այլոց մանկական մեծամտութիւնն և անտարբերութիւնը, մի վերին աստիճանի կորսատաբեր զրութիւն մանկական թարմ, առողջ հոգու համար: Իսկ հասակակիցների ընկերութեան մէջ շարունակ զտնւող երեխանների մէջ նկատում է աւելի բազմակողմանի և բնական մտաւոր զարգացում, աւելի վառ հետաքրքրութիւնն ինձ յաճախ զարմացրել է թէ ինչ տեսակ գժւար բաներ են կարողանում երեխանները սովորել միմեանցից: Նրանք կարծես չափահասներից լաւ են հասկանում՝ ի՞նչի մէջն է բանի իսկական էութիւնն ու գժւարութիւնը, և երեխմն կարողանում են հաղորդել միմեանց իրենց գիտութիւնները ամենախելացի և ամենաբանական կերպով:

Բայց, ինչպէս յիշեցի, ընկերութիւնը երեխն «վատ ազգեցութեան» վտանգներ էլ կարող է ներկայացնել: Զը պէտք է սակայն մոռանանք, որ կըթութեան վերջնական նպատակը ոչ թէ «բարեկիրթ երեխան» է, այլ լաւ մարդը, խելքի, կամքի, աղնիւ բնաւորութեան տէր մարդը, և որ եթէ երեխան մանկու-

թեան ժամանակ իրեն լաւ և հնազանդ է պահում, չի կարելի վստահութեամբ ասել, որ հասել ենք այդ մեր նպատակին: Յաճախ հէնց հակառակն է լինում,—որ կեանքի մէջ գլուխ է կորցնում նա, ով որ ժամանակին չի սովորել իր խելքով ապրել:

«Տանը պէտք է աղջել նրանց վրա, կրթել նրանց, իսկ տանից գուրս պէտք է նրանց ինքնապլուխ թողնել, — ասում էր ինձ իմ հին բարեկամներից մէկը, երբ խօսք էր բացւում երեխաների կրթութեան մասին: Նրա խօսքերը այն ժամանակ ինձ չափազանց թեթեամիտ էին երեւում: Բայց վերջը ևս աւելի և աւելի համոզւում էի զրանց ճշմարտութեան մէջ: Եթէ մենք անզօր ենք օգնելու երեխաներին, որ իրենց մէջ այնքան ինքնուրոյնութիւն զարգացնեն, որքան անհրաժեշտ է, որպէսզի հակառեն փորբահասակ ընկերների վատ ազգեցութեանը, կարող ե՞նք արգեօք մենք սպասել որ նըրանք կը կարողանան երբ և իցէ յաղթել կեանքի լուրջ գայթակղութիւններին:

Բայց եթէ մենք դիտենք ո՛ւ այս ինչ ընկերը անպայման վատ է ազգում մեր երեխայի վրայ, ի՞նչ անենք: Այնուամենայնիւ երբէք չը պիտի անպայման արգելենք նրա հետ խաղալու և լինելու, — թէ մեր և թէ միւս երեխայի օգուտը աճքի առաջ ունենալով: Մերժւածը աւելի մեծ գժւարութեամբ կը կարողանայ ուղղել իսկ մեր երեխան կարող է հեշտ մեծամտահալ նրա մէջ կարող է զարգանալ ինքնազո՞ւթիւն թէ՝ ես այնպէս չեմ, ինչպէս նա, — և նոյնպէս վատ սովորութիւն սեփական թերութեանը ներողումիտ նայելու: Մինչդեռ

առհասարակ չը պէտք է թոյլ տալ, որ երեխան այն համոզմանքի գայ, որ մեղանոր է միայն նա, ով որ ուրիշն գայթակղեցնում է. երեխան պէտք է զգայ իր սեփական թուլակամութիւնը, եթէ չի կարող ծանօթութիւն ունենալ ուրիշ երեխայի հետ այնպէս, որ չենթարկւի նրա վատ ազգեցութեանը:

Ընկերների վատ ազգեցութեան գէմ պէտք է մաքառել՝ ամրապնդելով երեխայի մէջ ընտանիքում պատւաստող բարոյական հասկացողութիւնները և յորդուրելով երեխային՝ ընդհակառակը, աշխատել լաւ ազգել այդպիսի ընկերների վրա: Նորերս առիթ ունեցայ լսել մի այսպիսի գէպքի մասին: Մի աղջիկ զպրոցում այնքան իրեն անհաշտ և վատ էր պահում, որ վարժունին հարկաւոր համարեց նախազգուշացնել աշակերտունիւններին, որ հետը չը խաղան: Բոլորն էլ սկսեցին փախուստ տալ տղջկանից, բայց այսպիսի վերաբերմունքը բոլորովին չուղղեց նրան: Երբ այդ վարժունու փոխարէն նշանակւեց մի ուրիշը, սա, ընդհակառակը, յորդուրեց ամբողջ գասարանը, որ քաղցրութեամբ աշխատեն գրաւել ընկերունու սիրտը, և իսկ որ շատ ժամանակ չանցած՝ աղջիկը նկատելի կերպով սկսեց լաւանալ:

Ընտանիքի գործն է առհասարակ զարգացնել երեխայի մէջ այնպիսի յատկութիւններ, պատւաստել նրան այնպիսի հակումներ, և ձգտումներ, որոնք ոչնչացնէին արա մէջ վատ ընկերների օրինակին հետեւելու տրամանքա գրութիւնը. գայթակութեան ենթարկելու վատնզը չէ գրութիւնը. գայթակութեան ենթարկելու վատնզը ինքն որ աւելի սաստիկ է լինում, եթէ գայթակուողը ինքն էլ տրամագիր է հնթարկւելու նրան: Բացի այդ, մենք

պէտք է մեր ընտանիքի մէջ գրաւենք մեր երեխաների ընկերներին, պէտք է ընկերանանք նրանց ընկերների հետ: Մէկ որ երեխաները զգում են որ ծնողները միջամտութ են լինում ընկերների հետ ունեցած իրենց յարաբերութիւնների մէջ, վատ ազդեցութեան վտանգը գրեթէ վերացւում է: Մեր մասնակցութիւնը դառնում է կարծես ընկերութեան խցնմանը և մասամբ ազդում է մեր երեխաների արած ընտրութեան վրա, և նրանց համակրութիւնը դէպի անհաճելի ընկերը աւելի դժւար է յաղթող հանդիսանում:

Երեխաները առնասարակ յաճախ են ընկերներ փոփոխում և այս բանը մենք սովորաբար վերագրում ենք նրանց թեթեամտութեան: Մինչդեռ այսպիսի անհաստատամտութիւնը յաճախ այն բանի հիտեանք է, որ երեխան կիսագիտակցաբար մի ինչ՝ որ բան է որոնում ընկերոջ մէջ և հիսութափեկելով՝ սկսում է նոյն բանը որոնել մէկ ուրիշի մէջ: Եթէ մենք զառնում ենք մեր երեխաների բարեկամների բարեկամ, կարող ենք առանց որևէ է ձնշում զործ դնելու նրանց վրա օգնել նրանց այդ որոնումների մէջ և յետոյ ամրապնդել նրանց այդ բարեկամութիւնը՝ շաղկապելով նրանց ընդհանուր շահերով, որոնք բարեկամութեանը տալիս են աւելի խորին բովանդակութիւն:

Եւ ահա, եթէ այդպիսի մանկական մտերմութիւնը ծագի ամբողջ կեանքի մտերմութիւն, որ հիմնւած է խորին համակրութեան և ընդհանուր շահերի վրա, — ասել է՝ մեր երեխան ձեռք է բերել կեանքի ամենամեծ բարիքներից մէկը և մեր ջանքերը լիածեռն վարձատրւած են:

### Հասակաւերների ուղանեամ

Ընկերութեան կարևորութիւնը հաւասարութեան և այստեղից բգխող գործողութիւնների ազատութեան մէջ է: Միւս կողմից, մեծերի հետ շփումն էլ ահազին կրթական նշանակութիւնը ունի, չնորհիւ հասակաւորների գերազանցութեան և հասունութեան: Բայց հէնց այս մեր համեմատական գերազանցութիւնը զրգում է մեղ, հասակաւորներիս միակողմանի նայել մանուկների և մանկութեան վրա, միայն դաստիարակելու և կրթելու տեսակէտից, այդ պատճառով՝ դաստիարակման և գարգացման հասկացողութիւնը յաճախ նեղ մտքով է ընդունւում: — դաստիարակութիւնը դառնում է խիստ կրպապահութեան պահանջ, զարգացումը՝ դասաւութիւն: Մենք քիչ ուշադրութիւն ենք դարձնում այն բանի վրա, որ երեխան մեծանում է, որ մանկութիւնը ֆիզիքական և հոգեկան աճման շրջան է: Տևած դասը կարելի է դրսից զոռով մտցնել երեխայի գլուխը, բայց նրա հոգեկան աճումը ներքուստ գործող ուժերից է կախւած: Որչափ ես եմ հասկանում, երեխայի կենակցութիւնը մեծերի հետ գլխաւորապէս այն նշանակութիւնը ունի, որ երեխայի մէջ ծածկւած մտքերի և զգացմունքների սաղմերը ընդունակութիւն են ստանում աճելու և զարգանալու տաքութիւն և կենդանութիւն առնելով հասակաւորների խելքից և սրտից, որպէս արեւի կենարար շողբերից:

Եթէ մեծերի վերաբերմունքը դէպի փոքրերը կա-

րելի է բնորոշել «կըթութիւն» խօսքով, հասկանալով այսպիսով երեխային Փիզիքական և մտաւոր մնագի մատակարարութիւնը, այն ժամանակ փոքրերի վերաբերմունքը դէպի մեծերը կարելի է բնորոշել «իւրացում» խօսքով:

Հասակաւորները և նախ և առաջ իրենք ծնողները երեխայի համար միջնորդ են հանդիսանում նրա և արտաքին աշխարհի, ընդհանրապէս կեանքի միջև: Երեխան ազահութեամբ ականջ է դնում և դնում է կեանքը, մեծերի գործերն ու խօսքերը և սկսում է նրանցով հասկանալ շրջապատող աշխարհի երեոյթները: Այս հանգամանքը պարզ ցոյց է տալիս մեզ մեր նպատակը, պարզ ցոյց է տալիս և մեր նպատակի բնակուն սահմանները:

Շըշապատող հասակաւորների հոգեկան շահերը, նրանց ընդհանուր մտաւոր բարձրութիւնը ի հարկէ ազգում են երեխայի մտաւոր զարգացման վրա, բայց նրա զգացմունքներն և բնաւորութիւնը կազմակերպում են աւելի շուտ անձնաւորութեան, օրինակի անմիջական ազգեցութեան տակ:

Այս տարրերութիւնը կարելի է ամենից լաւ բացատրել հետևեալ օրինակով: Կրօնուոյցը ասենք՝ մի գիտնական աստւածաբան է, ճարտարախօս. նա կարող է երեխաների մէջ արթնացնել կենդանի, զուտ վերացական հետաքրքրութիւն դէպի կրօնական հարցերը, բայց նրա հոգին բոլորովին չի վերացնի. իսկ մի կրօնասոյց, որ ինքը բարի քրիստոնեայ է, բերում է իր հետ դասարան իր անձնաւորութեան հրապոյրը, իր

չնւրջը տարածում է մի առանձին; կարծես նւիրական մթնոլորտ, որ թոյլ չի տալին երեխային նրա ներկաւ յութեամբ իր բնութեան որեէ վատ կողմ արտայայտել:

Որպէս զի մեծերի շահերը և առհասարակ հոգեկան կեանքը կարողանայ շանկալի ազգեցութիւն անել երեխայի մտաւոր զարգացման վրա, պահանջում է ի հարկէ որ մեծերը իրենց մտքերը չը թագցնեն նրանից: Թող ձեր խելքի լոյսը փայլի, ծնողներ, ձեր զաւակների աչքին շարունակ, որպէս զի նրանք միշտ տեսնեն և զգան ձեզ յուղող կեանքը, մի պահէք այդ լոյսը միտիայն աօնական առիթների համար, հիւրերի առջն փայլելու համար:

Բայց ինքնըստինքեան հասկանալի է որ հետաքըրքրական խօսակցութիւնը աւելի ևս կենդանի կը լինի, երբ կը հաւաքւեն մի քանի հասակաւորներ. կողմնակի մարդկանց ներկայութիւնը կարող է նոր տեսակէտներ առաջ բերել, որոնք կօգնեն աւելի լուսաբանել նիւթը: Եւ ես օգտաւէտ եմ համարում որ երեխաները ներկայ գտնւեն, երբ մեծերը խօսում են հետաքրքրաշարժ նիւթերի մասին, Նայելով երեխայի հարցասիրութեանը, հեշտ է առհասարակ զարդարար կազմել նրա ընտանիքի մտաւորականութեան մասին, արդեօք տեղին են ունենում այնտեղ լուրջ, հետաքրքրական խօսակցութիւններ թէ երեխաներին տրեող մտաւոր մնունդը դատարկաբանութիւններից, ասէ-կօսէներից և խրատներից դէնը չի գնում:

«Բայց քիչ բան, կայ որի մասին խօսում ենք.»  
— կը պատասխանեն ինձ: Անկասկած: Բայց առօրեայ

խօսակցութիւններից եռ անյարմար եմ համարում երեխանների ներկայութեամբ խօսել հիւրերի կամ միմեանց հետ միայն ոեռական յարաբերութիւնների մասին։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ պատահաբար խօսք է բացւում այս նիւթի մասին, նոյն իսկ եթէ բարոյական խիստ սահմաններից չենք դուրս գալիս, ինձ թւում է, թէ լւա չէ որ երեխանները ներկայ գտնւեն։ Իսկ ինչ վերաբերում է երեխանների ներկայութեամբ զանազան ուրիշ նիւթերի մասին խօսելուն, կարծում եմ որ խնդիրը այստեղ աւելի շուտ խօսակցութեան ձեր, քան թէ նիւթի մասին է։ Այսպէս օրինակ, հաւատի և անհաւատութեան մասին խօսակցութիւնը միայն այն ժամանակ կարող է վտանգաւոր համարւել, երբ հաւատի կողմանակիցը իր կոչման բարձրութեան վրա չէ գտնուում։

Չենք կարող այստեղ չը յիշել և այն վտանգի մասին, որ առաջ է գալիս խօսակցութիւնը ծաղրանքով համեմելու սովորութիւնից, միենոյն է՝ թէ պաշտպանւելու և թէ համոզելու նպատակով։ Այս ձեզ ինքնըստինքեան տղեղ է և կարող է երեխանների վրա վատ ազդել և կարծել տալ իբր թէ ծաղրանքով կարելի է ճշմարտութիւնը հաստատել առանց ծանրակըշու ապացոյցների։ Որքան որ օգտաւէտ է առողջ հեգնութիւնը, այսինքն՝ կօմիկականի բարեացակամ հասկացողութիւնը, որ երեխաններին սթափեցնում է և աշխոյժ է տալիս, այնքան վնասակար են ծաղրանքն ու չարամիտ ծաղրը։ Մեծերի խօսակցութիւնները երեխայի մէջ պէտք է ճշմարտութեան ծարաւ, մի նոր,

լաւ բան իմանալու ցանկութիւն արթնացնեն, ոչ թէ նրան ընտելացնեն ուրիշների թերութիւնները նկատելով զարձանալու. Թող նա առաջին օրւանից իսկ այն գիտակցութեան գայ, որ բոլոր վիճաբանութիւնների և դատողութիւնների նպատակն ու իմաստը—ճշմարտութիւն գտնելն է, ոչ թէ բառերով խաղալու, հակառակորդի պատահական խօսքից բան շնորհու և նրան ծաղը ու ծանակ անելու արհեստն է։

Առհասարակ երեխայի ներքին «ես»-ի կազմութեան, նրա հոգու վրա, ինչպէս ասացի, զիսաւորապէս ներդործում է մեծերի անձնաւորութիւնը ինքը, նրանց մատոր և բարոյական պատկերը և աշխարհաճայիցողութիւնը, որ արտայայտում է գործով և ոչ թէ լոկ խօսքով միայն։

Սկզբում երեխան նայում է կեանքին շրջապատող մեծերի, մտնաւանդ ծնողների աչքերով, ծնողների դատողութիւնները նրա համար օրէնք են, և նա վստահութեամբ հեակում է նրանց։ Այս անսահման վստահութիւնը մեզ խիստ պատասխանառու է գարձնում իշխանութիւն տալով հիմք զնելու մեր երեխանների ամբողջ ապագայի աշխարհանայեցողութեան։ Կենսական երկոյթների գնահատութիւնը, որ անգիտակցօրէն իւրացնում է երեխան մեծերի հետ շփւելով, վճռական նշանակութիւն ունի ամբողջ կեանքի համար։

Ահա հէնց այստեղ է դաստիարակների ամբողջ դժւարութիւնը։

Մեզանից ով չը գիտի թէ կեանքի մէջ ինչն ունի իսկական կարերութիւն, կամ ով մեզանից չի կա-

ըռղանում՝ որոշել երեսյթների համեմատական արժէաքը: Յաւն այն է, որ մենք այդ գիտենք աւելի տեսականապէս, իսկ շատ սակաւ ենք ընդունակ լինում այդ գիտութեան վրա հիմնելու մեր ամբողջ կեանքը, որը միմիայն այդպիսով է ստանում իսկական ներդաշնակութիւն և ամբողջացում: Որպէս զի մեր երեխաները կեանք մտնեն այս ինչ և այն ինչ հայեացըներով և հասկացողութիւններով, մեր սեփական կեանքը պէտք է լինի այդ հայեացըների և հասկացողութիւնների արտայացութիւն, մենք ինքներս մեր ուժերի չափ պէտք է աշխատենք իսկապէս իրականացնել այն իդէալները, որ տածում ենք մեր հոգու մէջ:

Մէկ որ մեր ձգտութիւնների նպատակը կը դառնայ սեփական անձնաւորութեան կատարելագործութիւնը, այդ բանը կը բարձրացնի և կը զտի մեր կեանքը և միմնոյն ժամանակ նաև մեր ընտանիքի ողին, որի ներգործութեան տակ են մէծանում մեր երեխաները: Նիւթական բարիքները երկրորդական տեղ կը բռնեն, և ժամանակի և ուժերի մի մասը, որ այժմ գործադրում ենք որչափ կարելի է շատ նիւթական հարցատութիւն ձեռք բերելու համար, կազմատի և մենք՝ աշխատելով մեր անձնաւորութիւնը կատարելագործել, օժանդակած կը լինենք նաև մեր երեխաների հոգեկան զարգացման: Մենք աւելի շատ ժամանակ և ուժ կունենանք զարգացնելու և ամրապնդելու մեր մէջ այն իդէալը, որոնք պէտք է մեր կեանքի ազդեցութեան տակ արծարծեն մեր երեխաների մէջ:

Ծնողների այս ինքնակրթութիւնը, ինքնազտու-

մը կը նպաստի նաև ընտանիքի, ամուսնութեան վերին աստիճանին բարձրանալուն: Երիտասարտութեան վերաբերմունքը գէպի կեանքի այս երկու ամենագեղեցիկ և բովանդակալից ձևերը կարող է սկզբից և եթի փչանալ և պղտորել, եթէ նա մանկութիւնից ստանայ այնպիսի տարարութիւններ, որոնք պիտի թելագրեն նրան ամուսնութիւնն և ընտանիքը համարել մի «տախտկալի և ձանձրալի տապակութիւն», փոխարէն այն հաւատով ներշնչելու, թէ հնարին է կեանքի մէջ սիրոյ իդէալը իրականացնել:

Սակայն ափսոս որ շատ յաճախ ընտանիքներում երեխաների մէջ բոլորովին չի նկատուում մեծերի հետ հոգեպէս շփւելու ցանկութիւնը: Այս բանը երբեմն նրանով է բացատրում, որ երեխաները երկիւղ են կրում մեծերից, մի զգացմունք, որ չը պիտի տեղի ունենայ մանաւանդ ծնողների և երեխաների յարաբերութիւնների մէջ: Այս երկիւղն ոչ թէ այն երկիւղն է, որ արդիւնք է պղտոր խաճմանքի, ոչ: Դա միայն երկիւղած բաշւողութեան զգացմունք է, երեխան իրեն աղատ չէ զգում մեծերի ներկայութեամբ և փակւում է ինքն իր մէջ: Ինչո՞ւ: Նրա համար, որ երեխան իսկոյն իր ոսքի տակ հողը կորցնում է և անվստահ է դառնում, հէնց որ բանը հասնում է այն ճակատագրական հարցին, թէ «այդպէս է թէ այդպէս չէ», «Լաւ է թէ վատա», կամ նրա համար, որ երեխան չի զգում որ իրեն սիրում են կամ որ մեծերը իսկապէս հետաքրքրում են իր գործերով: Երեխաները ծարաւ են համակրութեան, քաջալելութեան, գործակցութեան ոչ թէ միայն

հսական լինելուց, այլ և այն պատճառով, որ իրենք էլ, իրենց կողմից, ուզում են մի բան լինել մեզ համար,—ահա այս երևոյթը մենք շատ հեշտ մոռանում ենք կամ բոլորովին էլ չենք նկատում: Երբէք չեմ մոռանայ այն գառը բացականչութիւնը, որ դուքս թուալ մի 10-տարեկան աղջկայ բերանից, երբ մայրը, նրա ներկայութեամբ զանգատում էր իր ծանօթին թէ բոլորովին մարդ չի տեսնում»—«Իսկ մենք, մայրիկ, միթէ մենք մարդ չենք:»

Երեխայի գիտակցութիւնը, որ ինըն էլ կարող է մեզ համար մի բան լինել, իմ կարծիքով, ամեն ուրիշ տեսակ զգացմունքներից շատ կարող է նրան զրդել իր հոգին մեր առջև բանալու: Երեխաները սակաւ են զոհանում նրանով, որ մենք ներզամիտ ենք նայում իրանց ձգտու ներին. նրանք կամենում են հաւատացած լինել որ մենք իսկապէս հետաքրւում ենք իրենց շահերով:

«Գիտես, սայրիկ, դու այնպէս ես մեղ համար կարողում, կարծես թէ քեզ այդ բոլորովին չէ հետաքրքրում»,—ասաց ինձ մէկ անգամ իմ 10-տարեկան տղան մի այնպիսի ձայնով, որի սէջ լսելի էր կատարեալ հիասթափմունք: Հէնց որ երեխաները նկատում են որ իրենց խաղերին ու պարագմունքներին մեր ցոյց տւած հետաքրքրութիւնը «իսկական, ճշմարիտ» չէ, նրանք իրենց խարւած են զգում:

Երեխան չի բաւականանում նրանով, որ իրեն ինչ տալիս են. նա ինքն էլ կամենում է մի բան ուրիշին տւած լինել, համոզել որ ինքն էլ մի արժէք

ունի, ոչ թէ մի սիոնիլի խաղալիք է մեծերի համար: Իսկ այն գիտակցութիւնը, թէ ինքը մի նշանակութիւն ունի ուրիշի աչքում, ինընըստինքեան կը ծագի նրա մէջ, եթէ մենք նրա հետ միշտ այնպէս կը վարւինք, ինչպէս մի խելացի արարածի հետ. կը գիմենք նրա սեփական բանականութեանն և խելքին, ոչ թէ կը հարկադրմաք անպայման, հլու հնազանդւել մեր կարծիքներին, այլ կօգնենք որ մեզ և մեր պահանջները հասկանան:

Երեխաների հետ շփւելիս պէտք է նրանց տանք ամենալաւը, ինչ-որ կայ մեր մէջ: Երբ նրանք մեզ զիմում են և հարցնում, մենք միշտ պէտք է աշխատենք տալ նրանց ամենալուրջ, բովանդակալից և ճշմարիտ պատասխաններ, ոչ թէ մի կերպ պատասխանել, միայն զիմուից ուագ անելու համար,—իբր թէ միկնոյն է՝ ոչ-ինչ չեն հասկանայ, զեռ փոքր են: Եթէ նոյն իսկ երեխան գեռ անկարող է լինում հասկանալ լաւ մտածւած պատասխանի էութիւնն կամ լրջութիւնը, նա այնուամենայիւ զգում է, որ այդ պատասխանը թելադրած է մեր ուշագրութեամբ, մեր յարգանքով զէպի ինքը, ինչպէս զէպի մի մտածող անձնաւորութիւն: Իսկ այս միայն կարող է խրախուսել նրան մտաւորապէս աշխատելու, մինչդեռ այն գիտակցութիւն թէ ինքը մեզ մի «յիմար հարց» է տուել,—մի գիտակցութիւն, որ նրան ներշնչում է մեր պատասխանի անփոյթ, մեծամիտ եղանակը,—նրա մէջ անվատահութիւն է առաջացնում զէպի իր ոյժերը, խեղզում է նրա միտքը, երկիւզ է աղղում նրա զգացմունքին և ստիպում է նրան իր կեղեկի մէջ


թագնւելու։ Երեխայի մտքի զործունէութիւնը սկսւում է զարմանքով, և այդ զարմանքի զգացմունքը մենք պէտք է զնահատենք. նա մէր ամենալաւ աջակիցն է, երբ ուզում ենք երեխայի մէջ արթնացնել ինքնուրոյն մտածելու հակում և զարգացնել նրա զիտողութիւնը։ Մինչդեռ որքան յաճախ հասակաւորներս թեթի սրտով խեղում ենք այդ զգացմունքը, անփոյթ կերպով երեխային ասելով. «ի՞նչ զարմանալի բան կայ այստեղ։ Այդ այնպէս պարզ է։» Կարծես թէ այդ խօսքերով մենք հիմովին լուսաբանում ենք այս ինչ երեոյթի խոր պատճառները։

Իսկ երեմն—և այս աւելի ևս վատ է,—մենք ուղղակի ծաղրի առարկայ ենք շինում երեխայի միատութիւնը։ Գուցէ և առանց չար զիտաւորութեան։ Բայց հասակաւորի ծաղրը, նոյն իսկ երբ բարեմիտ է լինում սառցնում է մանկական հոգին։ Ուրիշ բան է նկատել երեխայի որևէ վարմունքի, որևէ թերութեան ծիծաղաշարժ կողմը և ցոյց տալ նրան այդ այսպէս, որ նա ինքն էլ ծիծաղի իր վրա—այս միայն կարող է առողջացնել և կազդուրել երեխային և թոյլ չը տալ որ երես առնի։

Վերջապէս, կը յիշեցնեմ մանկութեան մի առաւելութիւն. երեխաները այնպէս զիտեն մի առանձին փայլ տալ ներկայի՛ երեակայելով թէ ի՞նչեր կը կարողանան անել այն ժամանակ, երբ «մէծ» կը զատնան։ Իրեւ մի ոսկեճաճանչ շող անցնում է ամբողջ մանկութեան միշտով մի վառ յոյս, որ ապագան լիք է լինելու ուժով, իշխանութեամբ և երջանկութեամբ։ Եւ այս պայծառ

ապագան չը պէտք է անժամանակ պղտորենք և մոայց լացնենք մեր տխուր կենսական փորձառութեամբ։ չը պիտի ասենք, «Ոչ մի այդպիսի բան լինելու չէ։ Ի՞նչ ըստ խելքի և ընդունակութեան բան է։» Կեսմքի գաժան դպրոցը առանց այն էլ իր ժամանակին կը սովորեցնի երեխային սահմանափակել իր ցանկութիւններն և անուրջները, իսկ մենք աւելի լաւ է որ խրախուսենք նրանց և քաջալերենք տոկուն և զիմացկուն լինելու իրենց ուղածին հասնելու համար։

Պայծառ ապագայի յոյսն ու հաւատար—երեխաների սնկապելի սեփականութիւնն են, քանի որ նրանց բուլոր ընդունակութիւններն ու հակումները գեռ զարգացման և աճման շլջանումն են։



ՀՀ Ազգային գրադարան



NL0150243

